Գործ թիվ ԵԴ2/28595/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.09.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս, ծանոթանալով «Ռոմա» ՍՊ ընկերության ընդդեմ պատասխանող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 10.08.2023թ. գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/62 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ռոմա» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանը 01.09.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 10.08.2023թ. գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/62 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 01.09.2023թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 06.09.2023թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ